ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր

Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

ՀՀ Լոռու մարզպետի պաշտոնակատար,
մարզպետի տեղակալ Հ. Ավետիսյանին

Խնդրում եմ քննարկել, պատասխանել դիմումատուին և արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Ժամկետ՝ 10 օր:

Invalid signature

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274

Դ. Խուդաթյան

№ ԴԽ//19952-2025 **“___“ _____2025 թ.**

Կազմարող՝ Ֆ. Պողոսյան
Հեռ.՝ 010 51 51 38

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.1534173
11-06-2025թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն*

Դիմող՝ *ՀԱՍՄԻԿ ՌԱՖԱՅԵԼՅԱՆ*
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Հասցե՝ *ԵՐԵՎԱՆ, , ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ,*
Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ 2 Փ., 11ա, 6
hasmikrafayelyan@gmail.com : 37491847308

ԲՈՂՈՔ

Սպիտակ համայնքի ղեկավար

պարոն Քաջայր Նիկողոսյանին

****

կրկնօրինակը՝

ՀՀ Լոռու մարզի մարզպետին

lori.qartughar@mta.gov.am

****

ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար

պարոն Արմեն Գրիգորյանին

seco@gov.am

****

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

նախարար պարոն Դավիթ Խուդաթյանին

mtai.secretariat@gmail.com

ԲՈՂՈՔ-ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Նիկողոսյան,

Մենք՝ Սպիտակ քաղաքի Շահումյան փողոցի բնակիչներս, դիմում ենք Ձեզ՝ բարձրաձայնելով մի խիստ կարևոր և երկար տարիների ընթացքում չլուծված խնդրի մասին։

Տեղեկացնենք և միաժամանակ հիշեցնենք, որ Շահումյան փողոցի վերջին հատվածը /նախկին շաքարի գործարանին հարակից հատվածը/ ***տասնյակ տարիներ շարունակ գտնվում է չբարեկարգված վիճակում՝ առանց ասֆալտապատման*** (վերջին անգամ ասֆալտապատվել է 90-ական թվականներին), ի տարբերություն փողոցի մնացած հատվածի, որը մի քանի անգամ արդեն իսկ ասֆալտապատվել է։ Ընդգծենք, որ փողոցի այդ հատվածը ոչ միայն բարեկարգված չէ, այլև այդտեղ առկա են մեծ փոսեր, որոնք պատկան մարմինները իբրև թե փորձել են ծածկել հողի շերտով՝ ասֆալտի փոխարեն պարզապես հող լցնելով։ Սակայն ***տրանսպորտային միջոցների ակտիվ շարժի պատճառով այդ հողը անընդհատ տրորվում է, ինչի արդյունքում նկատվում է փոշու և օդի կեղտոտվածության մակարդակի բարձրացում***։ Այսինքն՝ փողոցը հողի շերտով «բարեկարգելը» ոչ միայն չի լուծել խնդիրը, այլև հանգեցրել է փոշու շարունակական կուտակման և տարածման՝ հատկապես քամու կամ տրանսպորտային միջոցների շարժի ժամանակ։

Ուշագրավ է, որ փողոցի այդ հատվածը Սպիտակ քաղաքի բանուկ հատվածներից մեկն է, քանի որ այդտեղ են գտնվում քաղաքի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հաստատություններ, այն է՝ Սպիտակ քաղաքի նոտարական գրասենյակը, երաժշտական և գեղարվեստի դպրոցները, ՀՀ ԱԱԾ-ի մասնաշենքը, կարի ֆաբրիկան, եվրոպատուհանների արտադրամասը և այլն։ Վերոնշյալ հաստատությունների առկայությամբ պայմանավորված՝ Շահումյան փողոցի այդ հատվածում էլ ավելի է նկատվում տրանսպորտային միջոցների ակտիվ շարժ, ինչը շեշտում է խնդրի լրջությունը՝ այդ ամենը վերածելով ոչ միայն անհարմարության, այլև առողջական և էկոլոգիական վտանգի, որին նպաստում է նաև մայթերին գտնվող ծառերի այս տարվա խորը էտումը՝ թողնվելով միայն ծառաբները։

Արդյունքում՝ գարնանը, աշնանը, և հատկապես ամռանը փոշու չափազանց մեծ քանակությունը վնաս է պատճառում փողոցի այդ հատվածում բնակվող անձանց, հատկապես երեխաների և տարեցների առողջությանը՝ խաթարելով նրանց առօրյա կյանքը, քանի որ չեն կարողանում բացել պատուհանները կամ հանգիստ նստել իրենց տների բակերում։ Բացի այդ, ստեղծված իրավիճակը բացասական ազդեցություն է թողնում նաև վերոնշյալ հաստատություններում աշխատող անձանց և փողոցի այդ հատվածով անցնող բոլոր մարդկանց առողջության վրա, հատկապես՝ երաժշտական և գեղարվեստի դպրոց հաճախող երեխաների։ Նշենք նաև, որ փողոցի անբարեկարգ վիճակը և փոսերի առկայությունը մեծացնում է նաև տրանսպորտային միջոցների վթարվելու/վնասվելու ռիսկը։

Այս ամենը թույլ է տալիս փաստել, որ Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները դրսևորել են և շարունակում են

դրսևորել անգործություն՝ Շահումյան փողոցի այդ հատվածը տասնյակ տարիներ թողնելով անբարեկարգ և անմխիթար վիճակում՝ չհարգելով վերոնշյալ անձանց առողջության պահպանման սահմանադրական իրավունքը, չնպաստելով այդ անձանց առողջության պահպանմանն ու բարելավմանը և վտանգի տակ դնելով այդ անձանց առողջությունը: Մինչդեռ այս ամենի հարգումն ու պաշտպանությունը Սպիտակ համայնքի ավագանու և ղեկավարի սահմանադրական պարտականություններն են, որոնց կատարման մասով նրանց կողմից, սակայն, դրսևորվում է անգործություն և անտեսվում է այն հանգամանքը, որ Շահումյան փողոցի հիշյալ հատվածի անհապաղ բարեկարգումը առավել քան կենսական նշանակություն ունի փողոցի այդ հատվածի բնակիչների, այդտեղ գտնվող հաստատությունների աշխատողների, այդտեղ հաճախող երեխաների և այդ հատվածով անցնող անձանց ու տրանսպորտային միջոցների համար: Այս ամենը կարևոր նշանակություն ունի նաև Սպիտակ քաղաքի տնտեսական ակտիվության համար: Ուշագրավ է, որ Շահումյան փողոցի այլ հատվածներ 2025 թ. արդեն իսկ բարեկարգվել են, ինչը ողջունելի է, սակայն անհասկանալի է վարչական մարմնի կողմից անհավասար և տարբերակված մոտեցումը փողոցի առավել բանուկ հատվածի նկատմամբ, որի բարեկարգման ուղղությամբ որևէ քայլեր չեն ձեռնարկվում, ինչը իրավաչափ չէ:

ՀՀ սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետությունում **մարդը բարձրագույն արժեք է:**
2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

ՀՀ սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք:

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» 12.11.2024 թ. թիվ 137-Ն որոշմամբ որոշվել է հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեն՝ **եկամուտների գծով՝ 2.348.178.400 ՀՀ դրամ**:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ կազմակերպում է համայնքի բնակավայրերի բարեկարգումը և կանաչապատումը:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ համայնքի պարտադիր խնդիրներն են համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը:

Նույն օրենքի 98-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով ուղղակի վտանգ է

սպառնում անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին, ապա տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինը հսկողության ընթացքում կամ համապատասխան ահազանգ ստանալու դեպքում պարտավոր է իր միջոցներով վերացնել այդ վտանգը՝ նախօրոք այդ մասին ծանուցելով տեղական ինքնակառավարման համապատասխան մարմնին: Սույն մասով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի կատարած աշխատանքները պետք է հատուցվեն համայնքի միջոցներից այն չափով, որքանով դրանք կլինեն համաչափ և չեն գերազանցի վտանգը չվերացնելու դեպքում պատճառվելիք գույքային վնասի չափը:

«**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ**» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը համարվում են վարչական մարմիններ:

Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողությունը կամ **անգործությունը, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:**

Նույն օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը **կամ անգործությունը:**

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

Նույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

Նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են անձի դիմումը, բողոքը:

Նույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթը պետք է իրականացվի հնարավորինս սեղմ ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով հիշյալ իրավական նորմերի պահանջներով, ինչպես նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներով՝

խնդրում ենք՝

1. ***ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով ընդունել բարենպաստ վարչական ակտ Սպիտակ քաղաքի Շահուման փողոցի վերջին հատվածի /կոորդինատներ՝ 40.835539, 44.259638 և 40.836122, 44.257354/ բարեկարգման, ասֆալտապատման և կանաչապատման մասով:***
2. ***1-ին կետում նշված բարենպաստ վարչական ակտի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իրազեկել Հասմիկ Ռաֆայելյանին և Սպիտակ քաղաքի Շահուման փողոցի համապատասխան բնակելի տների բնակիչներին, ովքեր ստորագրել են սույն բողոք-դիմումը:***
3. ***ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում սույն բողոք-դիմումը ստորագրող անձ Հասմիկ Ռաֆայելյանին /հաշվառման հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Սպիտակ, Շահուման 191/ էլ. փոստի հասցեի՝ hasmikrafayelyan@gmail.com, միջոցով տեղեկատվություն տրամադրել առ այն, թե ինչո՞ւ մինչ օրս չի բարեկարգվել, ասֆալտապատվել և կանաչապատվել Սպիտակ քաղաքի Շահուման փողոցի վերջին հատվածը /կոորդինատներ՝ 40.835539, 44.259638 և 40.836122, 44.257354/, և ե՞րբ է այն բարեկարգվելու, ասֆալտապատվելու և կանաչապատվելու: Խնդրում եմ ներկայացնել նաև տրամադրվելիք տեղեկատվության իրավական և փաստական հիմքերը հիմնավորող ապացույցները:***

Կից ներկայացնում ենք՝

1. փողոցի համապատասխան հատվածի լուսանկարները,
2. համապատասխան անձանց ստորագրությունների ցուցակը, որոնց անունից ներկայացվում է սույն բողոք-դիմումը:

Կից՝ 6 ֆայլ

Դիմող՝

ՀԱՍՄԻԿ ՌԱՖԱՅԵԼՅԱՆ